

XVIII ԳԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ ՏՊԱԳՐՎԱԾ ԵՐԿՈՒ ԴՐՔԻ ՄԱՍԻՆ

ՎԱՋԻՆԵ ԼԱՄԲԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ

XVIII դ. առաջին կեսին հայ մշակույթի զարգացման բնագավառում զգալի փերելք է ապրում նաև տպագրութիւնը: Հրատարակված գրքերն ուշագրավ են ոչ միայն տպագրութիւն համեմատաբար բարձր որակի, այլև բովանդակութիւն բազմազանութիւն առումով: Իկյդ շրջանում հայ տպագրութիւնն ընթանում էր ակնհայտ դժվարութիւններով, որոնք հիմնականում պայմանավորված էին հասարակական կյանքի տարբեր ոլորտներում հանդես եկող գաղափարական պայքարի հակասութիւններով:

Գրաբար հայերենով գրված և հրատարակված ոչ բոլոր գրքերն են, որ աչքի են ընկնում տպագրման հստակութեամբ և ավարտվածութեամբ, նյութի ընդգրկման պարզութեամբ և միակերպութեամբ: Հանդիպում են գրքեր, որոնց տպագրութիւնը խափանված է եղել ձեռնարկման պահին, որոնք լույս են ընծայված անավարտ վիճակով, պարունակում են որոշ մասերի և հատվածների բացթողումներ:

XVIII դ. առաջին կեսին տպագրված մի քանի գրքեր հայ մատենագիտութիւն ցանկերում, հայ տպագրութիւն պատմութեանը նվիրված աշխատութիւններում ստացել են ոչ հանգամանալից մեկնաբանութիւն: Երբեմն ըստ ամենայնի շին ներկայացվում գրքերի տպագրական արտաքին հանգամանքները, ընդգրկված աշխատութիւնների բովանդակութիւն մասին անհրաժեշտ տեղեկութիւններ:

Սույն հոդվածի հիմնական նպատակը այդ շրջանում գրաբար հայերենով գրված և տպագրված երկու գրքի բանասիրական-մատենագիտական վերլուծութիւնն է:

Դրանցից առաջինը Գևորգ Միլլայիմ Կոստանդնուպոլսեցու «Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկարնակաց» ընդհանուր խորագրով գիրքն է: Ըստ գրքի «Յիշատակարան»-ի (էջ 253—256)՝ տպագրիչը Մարտիրոս դպիրն է: Այստեղ ուշագրաւն այն է, որ խոսվում է նաև գրքի լույս ընծայման դժվարութիւնների մասին՝ կապված տպագրութիւնը մասնակից անձանց որոշ անհամարժեքների և «սրբագրութեան» տկարութիւնների հետ: Իկյուհանդերձ, տպագրիչը գրքի «Յիշատակարան»-ում իր մասին հետևյալն է նշում. «Եւ զկնի յիշեցէք և զանհմաստ և զանպիտան ծառայս ձեր զՄարտիրոս դպիրս մեղսամած, հանդերձ որդեկօթն իմովք Սերովբէին և Սարգսին: Քանզի ի գործ սորա, եթէ ի սրբագրութեան, և եթէ ի համարարացութեան, վկայութեանց՝ զաշխատանս յոգունս ընկալայ միով ևեթ օրինակաւ ըստ տկար կարեաց իմոց, որ և սխալանաց իմոց՝ ներել ժտեմ ի բարեսէր եղբարցդ իմոց»¹: Իկյստեղ,

¹ «Գիրք վիճաբանութեան ընդդէմ Էրկարնակաց»: Շարագրեցեալ Գևորգ վարդապետի Կոստանդնուպոլսեցոյ միլլայիմ սղոյու կոչեցելոյս, Կ. Պոլիս, 1734:

² Սույն տեղում, էջ 256:

ինչպես նկատելի է, խոսվում է աշխատության երկու ձևերի օրինակի վրա թափած խմբագրական տկտր կարողությունների մասին: Այս ակնարկի մեջ, որքան էլ տպագրիչի համեստության արտահայտություն համարվի, այնուամենայնիվ պիտի նկատել, որ «տկարությունը», իբրե, դրսևորվում է ոչ միայն գրաբարի «ստվորով» տիրապետման, այլև տպագրության ոչ լիարժեք վարպետության հարցերում, հնդիրն այն է, որ Գեորգ Մխլայիմի «Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկարեակաց»-ի տպագրությունը հետագայում չի իրականացված հատկապես վերնագրերով ներկայացվող «գրքերի», դրանց մեջ մտնող կոնկրետ հատվածների առումով: Հենց սկզբից նշենք, որ դրանք գրքում տրված են համեմատաբար միավազաղ և իրարից ղժվար դանդաղանվող առանձնացումներով:

Մինչև այժմ հայտնի մատենագիտական բոլոր ուսումնասիրություններում սույն գիրքը ներկայացված է իբրև մեկ ամբողջական, առանձին աշխատություն՝ մեկ ընդհանուր վերնագրով, այն է՝ «Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկարեակաց»: Գ. Զարբհանայանը, որն ըստ էության առաջին տեղեկությունն է հաղորդում սույն գրքի մասին, նշում է գրքի այն ընդհանուր վերնագիրը միայն, որ տրված է տիտղոսաթերթի վրա, իսկ փակագծի մեջ ավելացնում է, թե գիրքը «Կոստանդնուպոլսոյ տպագրութիւն» է³, Հայկական տպագրությանը նվիրված իր ընդարձակ աշխատության մեջ Լեոն տալիս է միայն հետևյալ տեղեկությունը. «նույն տարին (իմա 1733-ին, փխն. 1734-ին, ինչպես նշված է տիտղոսաթերթում—Վ. Հ.) տպվեց Ստամբուլի Գեորգ Մխլայիմ վարդապետի «Վիճաբանությունը» գիրքը: Փակագծի մեջ նկատենք, որ այս վարդապետը վեց տարի ուսում էր առել Փարիզի մեջ, լավ տեղյակ էր հունարեն, լատիներեն և ֆրանսերեն լեզուներին, քայքայ միայն կրոնական վիճաբանություններ հնդինակելու ախորժակն ու հոժարությունն ուներ»⁴: Մեջբերման երկրորդ հատվածը՝ հատկապես լատիներենին տեղյակ լինելը և «կրոնական վիճաբանություններ հնդինակելու ախորժակն ու հոժարությունը», տվյալ դեպքում խիստ կարևոր են այն իմաստով, որ Գեորգ Մխլայիմը հայտնի է դառնում իբրև լատիներենից թարգմանվող և «կրոնական վիճաբանությունների» բովանդակություն ունեցող մի աշխատության հնդինակ: Այդպիսին է հարցի մատենագիտական դրվածքը նաև Ա. Ղազիկյանի, Թևոդեի և Գ. Լևոնյանի աշխատություններում⁵: Այս առումով թերևս միակ բացառությունը Ք. Կորկոտյանի մի դիտողությունն է, որն, այդուհանդերձ, չի հասնում հարցի վերջնական պարզաբանմանը: Պոլսահայ տպագիր գրքի հմուտ մատենագետն իր հատուկ ուսումնասիրության մեջ համառոտակի

³ Գ. Զարբհանայան, Հայկական մատենագիտություն, այդուրենական ցուցակ տպագրության դրոսեն մինչև առ մեզ եղած հայերեն տատարակությանց, Վենետիկ, 1883, էջ 128—129:

⁴ Լ. Ն. Հայկական տպագրություն, մեր կյանքը, գրականությունը անցյալում, հ. 2, I սաս, Թիֆլիս, 1902, էջ 60:

⁵ «Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան (այ կյանքի», կազմեց հ. Արսեն Ղազարոս Ղազիկյան Մխիթարյանց. 1 (Ա—Մ), Վենետիկ, 1909—1912, էջ 432—433, 434—436, Թևոդեի, Տիպ ու տառ, գիրք-ի ծագման և միջազգային ու հայկական տպագրության վրա ձգված ակնարկ մր. 4, Պոլիս, 1912, էջ 59, Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, պատմական տեսություն սկզբից մինչև XX դարը, Երևան, 1958, էջ 141:

նշում է ոչ թե գրքի ընդհանուր տիտղոսաթերթի, այլ նրանում տեղ գտած «Առաջին գրքի» կոնկրետ վերնագիրը: Լեյս առումով նա գրում է. «Բացի հիշված հրատարակություններից, Մարտիրոս զարի ուշագրավ հրատարակություններից է նաև Գևորգ Մխլայիմի «Ճշմարիտ նշանակութիւն կաթողիկէութեան» գիրքը, որ անմիջապէս արձագանքում էր ժամանակի զավանթանական կոիվներին, որոնք կատաղի ձևով մղում էին կաթոլիկ և լուսավորչական եկեղեցիների ջատագովները»⁶: Իվ իրոք, գրքի առաջին բաժինը (էջ 3—175) ներկայացնում է Գևորգ Մխլայիմի «Ճշմարիտ նշանակութիւն կաթողիկէութեան և հերձուածողութեան» աշխատությունը, որը տույազրված է իբրև «Առաջին գիրք»:

Այսպիսով, վերոհիշյալ մատենագիտական տեղեկությունների համա-
ձայն, Մարտիրոս դպիր տպարանում, Կ. Պոլսում, 1734 թ. լույս է ընծայվել
«Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկաբնակաց»-ը՝ իբրև մեկ ընդհանուր և
միասնական աշխատություն, որը բաղկացած է 256 էջից: Մինչև ըստ այս տպա-
րությունն ընդգրկում է ոչ թե մեկ, այլ երկու առանձին աշխատություն՝
առաջինն ինքնուրույն, իսկ երկրորդը՝ թարգմանական:

Մանրթանալով սույն տպագրությունն արտաբերին կողմերին և, որ սովյալ գեղարվեստ խիստ կարևոր է, նրանում տեղ գտած նյութի բովանդակությանը, սլաղովում է հետևյալը. նախ՝ ընդհանուր տիրույթներում նշվող՝ «Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկարակաց: Շարագրեցեալ Գէորգ վարդապետի կոտտանդնուպօլսեցեայ միւլէյիմ օղլու կողմէն» վերնագրով, ըստ էության ներկայացվում է երկու աշխատություն՝ «Առաջին գիրք. Յաղագս կաթողիկէութեան և հերժուածողութեան» և «Երկրորդ գիրք. Յաղագս Պահոց», որտեղ գիրք բառը փաստորեն կիրառված է բաժին նշանակությամբ: «Առաջին գիրք» Գևորգ Մխլայիմի ինքնուրույն աշխատությունն է, որ զետեղված է հիշյալ տպագրության 3—175 էջերում, իսկ նկատի առնենք նաև հեղինակի կողմից՝ այդ աշխատության բերումով տրվող «Աղօթք շարագրողի դրոշմ» առ Քրիստոս, վասն դարձման երկաղաւանաց ազգին իւրոց»-ը (էջ 164—175): «Առաջին գիրքն», իր հերթին, տրոհված է երկու գլուխների՝ 1) «Յաղագս կաթողիկէութեան» (էջ 3—40) և 2) «Յաղագս հերժուածողութեան» (էջ 40—164): Գլուխների վերնագրերը պարտադիր կերպով նշվում են յուրաքանչյուր էջի վերին մասում առանձնացվող վանդակներում: Իկյ վերնագրերը, հավանաբար տպագրության վարպետության պակասի հետևանքով, էջ 3-ում տրվում են մեկ միացյալ վերնագրով, որ կրում է՝ «Գլուխ Ա. Ճշմարիտ նշանակութիւն կաթողիկէութեան և հերժուածողութեան» անվանումը: Վերջինս, բնականաբար, աշխատության գլուխների հերթականության մեջ մտնում է փոքր-ինչ տարտամություն: Երկրորդ՝ նույն գրքում զետեղված է նաև Գևորգ Մխլայիմի՝ յատկենդանից թարգմանած և ժամանակի նայկաբան գրաբարով շարագրված մի աշխատություն, որ կրում է հետևյալ խոսուն վերնագիրը՝ «Պահօ առաջին րիւտտնէից. ցուցեալ ի թղթոյն Օգոստինոսի: Խաղաճանութեամբ շարագրողի վերջի զընցեալ գրքոյն»: Իկստեղ՝ վերնագրի վերջում տրվող «Թարգմանութիւն»

Գ Գ. Կոռկոտյան, Հայ տպագիր զրքքի Կոստանդնուպոլսոյ (1567—1850 թթ.).
Փրնան, 1964. էջ 64—69.

1. Անդամությունը պետք է լինի համապատասխան հոգևոր և մարմնական վերականգնման, որ, ինչպես տեսանք, Ք. Կոթկոտ-
յանի: Կողմից ընդունվում է իբրև այդ տպագրության ընդհանուր վերականգնում:

թևամբ շարագրողի վերոյ գրեցեալ դրոյն» արտահայտութիւնը անառարկելիորեն խոսում է այն մասին, որ վերջինիս թարգմանիչ-հեղինակը նույնպէս Գևորգ Մխլայիմն է։ Այդ թարգմանության ընդարձակ վերնադիրը, համաձայն տպագրական ոճին, գրքի 177—268 էջերի վերին մասում նույնպէս ծանուցվում է համառոտ գրութեամբ՝ «Յաղագս Պահոց»։ Ըստ այդմ, էջ 177-ից սկսվում է «Ներկրորդ գիրքը», որ ունի հետևյալ մասերը՝ 1) «Առաջադրութիւն թարգմանողին և Պատճառ թղթոյն սրբոյն Օգոստինոսի» (էջ 177—186), 2) «Թուղթ սրբոյն Օգոստինոսի, առ կասուլանոս էրէցն, ընդդէմ հոռմայեցոյ ուրումն, որ գրեալ էր վասն պահելոց պաւլոս շարաթու. թարգմանեցեալ ի լատինացոց ի հայ բարբառ» (էջ 187—217), 3) «Առ կասուլանոս էրէցն՝ վասն Պահոց կիրակէի» (էջ 217—228)։ Երրորդ՝ «Պահոց առաջին քրիստոնէից. ցուցեալ ի թղթոյն Օգոստինոսի» երկի թարգմանութեանը (էջ 228—250) հաջորդում է «Եզրակացութիւն թարգմանողին. և Տրորդորակ առ ասխարմայս հայոց» ենթացիկագրով հատվածը⁸, որը թե՛ գրութեամբ և թե՛ շարադրանքի բովանդակությամբ սերտորեն առնչվում է թարգմանության մեջ մատուցվող նյութի ոգուն։ Գրքի 250-րդ էջում ավարտվում է շարադրանքը, որին հաջորդում է «Յանկ գլխաւոր բանից մատենիս»-ը (էջ 251—253), այնուհետև տրվում է գրքի՝ տպագրիչի կողմից շարադրված «Յիշատակարան տպեցելոյ գրքոյս» մասը (էջ 253—256)։ Գրքի «Յիշատակարան»-ը ամբողջովին ներմուծված է Ա. Ղազիկյանի հիշյալ աշխատության մեջ⁹։

Գևորգ Մխլայիմի ինքնուրույն և թարգմանական աշխատութիւնները հետաքրքրական են նաև իրենց բովանդակությամբ՝ հատկապէս բանասիրական ուսումնասիրության տեսակետից, իսկ ընդհանուր առմամբ դրանք այսօր ունեն ավելի շուտ պատմական նշանակություն։ Այդ երկերը արժեքավոր են տվյալ շրջանի գրաբար հայերենի զարգացման պատմության քննության առումով։ Այդուհանդերձ, ավելորդ չէ նշել, որ ժամանակի ուսյալ գիտնականի՝ հիշյալ տպագրութեամբ ավանդված երկու աշխատութիւնները ըստ էության կազմում են մեկ ամբողջություն՝ գաղափարական բովանդակության ոլորտում արժարժվող հարցերի քննության, աշխարհայացքային գծերի և շարադրանքի մեջ հանդես եկող խնդիրների վճռման առումներով։ Ինչպէս ամբողջ թարգմանությունը, այնպէս էլ նրան հարակից մասերի ինքնուրույն շարադրանքը իրենց բովանդակությամբ միանգամայն համահունչ են հեղինակի մյուս՝ ինքնուրույն աշխատությանը, քանի որ երկուսում էլ շոշափվում են այդ շրջանում քրիստոնեական եկեղեցու՝ իրար հակոտնյա երկու ուղղութիւնների միջև եղած գաղափարական պայքարի հարցերը։ Եվ այդ հարցերի լուծումը հեղինակը իրականացնում է լուսավորչական գաղափարախոսության բուն ջատագովության տեսանկյունից։ Ըստ այդմ՝ Գևորգ Մխլայիմի աշխատութիւնների տպագրութիւնը գաղափարական պայքարի մի թե՛ կոնկրետ միջոցառումներից մեկը պիտի համարել։ Այդ շրջանը, ինչպէս գիտենք, համընկնում է Հովհաննէս Կոլոտի պատրիարքութեան տարիներին (1715—1741), մի մարդու, որը, ինչպէս նկատել է Հ. Աճառյանը, «եղով ազդու պաշտպան ազգի շահերին ընդդէմ կաթոլիկներին ոտնձգութեանց»¹⁰։

⁸ Ինքնուրույն վերնագրերի մեջ կատարել ենք մասնակի փոփոխություններ՝ էյնելով հայերենի ուղղագրության այժմյան պահանջներին։

⁹ Ա. Ղազիկյան, նշվ. աշխ., էջ 432—433։

¹⁰ Հ. Աճառյան, Հայոց անձնականների բառարան, Գ. Երևան, 1946, էջ 700։

Այսպիսով, ընդհանուր եզրակացությունն այն է, որ Գևորգ Մխլաթիմի «Դիրք վիճաբանութեան ընդդէմ երկարնակաց»-ի երկրորդ մասը տպագրության մեջ տրվում է իբրև մեկ ընդհանուր աշխատության «Երկրորդ գիրք», որը, տպագրության վարպետության պակասի և տպագրողների «տկարության» հետևանքով և՛ ոչ անկախ մատենագետների անհետևողականությունից, մինչև այժմ տեղիք է տվել մատենագիտական թյուրիմացության: Այստեղ հատկանշական է այն, որ հեղինակի ինքնուրույն և թարգմանական աշխատությունները դիտվել են մեկ ամբողջություն, և ինքնուրույն աշխատության անվանումը դարձել է գրքի ընդհանուր տիտղոսաթերթում բերվող վերնագիր՝ ծրարելով ու անհայտ պահելով թարգմանական աշխատությունը:

Երկրորդ գիրքը, որին հարկ ենք համարում անդրադառնալ, Մխլաթար Սեփառացու «Կրթութիւն աղօթից» աշխատությունն է¹¹։ Ինչպես նկատելի է ընդարձակ վերնագրից, գրքի վերջում տրվող մի բացատրությունից, բացի հիշյալ աստվածաբանական ընդարձակ և տառնաձև ուսումնասիրությունից, գիրքն ընդգրկում է նաև չափաբերական մաս: Վերջինս, մեր կարծիքով, ոչ պակաս կարևոր հետաքրքրություն է ներկայացնում դարձյալ բանասիրական-մատենագիտական առումով՝ կապված հիմնախնդրում հետևյալ հարցերի հետ. ա) չափաբերական մասի մեջ մտնող մի «այբբենական երգարանության» արտաքին կառուցվածքը և դրանով իսկ՝ հեղինակի հետապնդած նպատակը, բ) չափաբերական մասի և ընդհանուր առմամբ ամբողջ աշխատության լեզվի այդ շրջանում գործառնող գրաբարի համակարգի մեջ լատինատիպ ձևերի թուլացող կիրառությունը և գ) բանաստեղծություններից մեկի գրության ժամանակը, քանի որ այն զետեղված լինելով «Կրթութիւն աղօթից»-ի մեջ և կազմելով նրան հարակից մաս՝ գրված է եղել ավելի շուտ:

«Կրթութիւն աղօթից»-ը զբաղեցնում է գրքի էջ 7—190-ը, որը, դատելով մեր ձեռքին եղած օրինակով, ըստ էության չի ավարտվում: Այն պիտի որ շարունակվեր նաև բացակայող առնվազն 191—193 էջերում (191-ը պիտի սկսվեր զի բառով), էջ 194-ում, ըստ գրքի տպագրական սկզբունքի, պիտի լիներ մի թեմատիկ պատկեր՝ Գրքի երկրորդ մասն ավելի բազմազան է: Այդ մասում է զետեղված «Երգաբանութիւն առ ամէնօրհնեցեալ կոյսն Մարիամ» (էջ 195—239) չափածո ստեղծագործությունը՝ որը տվյալ դեպքում մեր ուշադրության բուն առարկան է: Այնուհետև սեղ են գտնվ բավական թեթև և հայցողական ոճով շարադրված ութ սաղմոսներ (էջ 243—253), ինչպես նաև ներբողական բնույթի չորս համառոտ բանաստեղծություններ (էջ 255—264): Վերջիններիս մասին գրքի վերջում տրվող բացատրության մեջ հեղինակը հետևյալն է գրում. «...և վերջապէս եղեալք եղեն ի վախճանի գրգկանս ոմանք սաղմոսք, և երգք եկեղեցականք, որք թկալտ նան ի յայլս գիրս գտանէին. բայց վատն դիրապէս ունելոյ առձեռն պատրաստ, գրեցեալք եղէն աստէն որոշակի. զի ամենայն որ ըստ փափարանաց իւրոց որբան և պիտոյ լինիցի

¹¹ «Կրթութիւն աղօթից, ընդ որում և շարակցի ոտանաւոր այբբենական առ ամէնօրհնեցեալ կոյսն. շարադրեցեալ ի Մխլաթարայ վարդապետէ Սեփառացու», Վենետիկ, 1718 (գիրքն ունեցել է նաև երկրորդ տպագրություն՝ Վենետիկ, 1772):

¹² Գրքի սկզբում (էջ 3—4) տրվում է հեղինակի շնորհանգրգիռը՝ ուղղված իր մեկնեսանին, իսկ էջ 5—6-ը նույնպես բացակայում է:

ասիցէ՝¹³ Գրքի էջ 265—267-ում տրված է անվերնագիր մի բացատրություն, որը ունի ավելի շուտ հիշատակարանի արժեք։

«Երգաբանութիւն»-ը գրված է բազմաբարդ ակրոստիքոսով, որտեղ հիմնական խնդիրը հայերենի այբուբենի դյուրին ուսուցմանն ու ըստ ամենայնի յուրացմանը նպաստելն է։ Հազար երեք հարյուր վաթսուներեք տողից բաղկացած այդ բանաստեղծությունը կազմում է մեկ ամբողջություն, որի շարադրանքն ընթանում է, ընդհանուր առմամբ, յուրաքանչյուր տողի սկզբում այբուբենի մեկ տառ զննելու եղանակով։ Ըստ այդմ, նկատելի է մեսրոպյան այբուբենի գործածության երեսունվեց դեպք։ Բանաստեղծության մեջ ակրոստիքոսը օգտագործվում է հետևյալ սկզբունքներով։ Նախ՝ բացառությամբ երկուսի, մնացած բոլոր դեպքերում այբուբենի տառերով սկսվող տողերն անընդմեջ հաջորդում են միմյանց։ Օրինակ՝

Բաղձալի սուրբ կոյս երանեալ.
Գեր քան զերկինս վերոգնալ.
Դուստր եայի դու յոյժ գովեալ.
Եւ քան զբազումս առաւելեալ.
Զարմանալի դառուց վերեոց.
էրանելի դու ի զուարթնոց (էջ 197)։

Իրեն բացառություն հանդես եկող վերոհիշյալ երկու դեպքում է, որ այբուբենի տառերն ունեն տողերումեջ հաջորդականություն։ Մի դեպքում, երբ սկսվում է բանաստեղծությունը, տառերի տողերումեջ ակրոստիքոսային կիրառումն ունի առաջընթաց հերթականություն. ինչպես՝

Ամենօրնեալ սուրբ կոյս զըթա.
մտաց կուրիս իմաստ շնորհեալ.
Բուսաւ յիս ախտ շար հեղութեամբ.
ի քեզ դիմեմ այժմ օրհնութեամբ.
Գուցցէ բուժիմ ի ճէն արագ.
Նորոգիցեմ զվարս իմ անկարգ.
Դառնամ հոգեով ի սէր քո արդ.
չքնաղ սուրբ կոյս՝ դու լեր ինձ զարդ... (էջ 195)։

Իսկ մյուս դեպքում, երբ ավարտվում է բանաստեղծությունը, այդ տեղի է ունենում ետընթաց հերթականություն. ինչպես՝

Քաղցրը կուսիդ սէրն յուաք.
բնդ հետ իւղոց քոց ընթացաք.
Փարեցաւ զքեւ փեսայն անշափ.
նորին հրեշտակք հարին ըզ ծափ.
Իկամամք սիրոյ քոյ խոցեցաւ.
կուսիդ ականքն որ մի ցուցաւ.
Յանկ էր միակ սիր մրտաց քոց.
առ սուրբ փեսայդ ե ոչ այլոց... (էջ 237)։

Վերջին երկու դեպքում՝ բանաստեղծության սկիզբն ու ավարտը այբուբենի տողերումեջ ակրոստիքոսային մեկական կիրառությամբ հակադրվում են բա-

¹³ «Կրթութիւն ազօթից», էջ 266—267։

նաստեղծության մյուս ղեկավարում հանդիպող այբուբենների ակրոստիքոսային կիրառություններին. սկզբում մատուցվում է այբուբենը հանդարտ ուսուցմամբ, վերջում այն յուրացվում է ետընթաց հաջորդականությամբ: Երկրորդ՝ բանաստեղծության մեջ այբուբենի ակրոստիքոսային գործածության յուրաքանչյուր ղեկավարում ընդգծվում է հերթական տառը, որին նախորդող տառով տողը բացակայում է: Այս սկզբունքի հետևողական կիրառումը այբուբենի ուսուցման ու յուրացման գործում մտցնում է մեծ աշխուժություն: Այսպես, օրինակ, այբուբենի օգտագործման իններորդ ղեկավարում ընդգծված է Թ տառը, որին նախորդող Լ տառով տողը բացակայում է ակրոստիքոսային շարքում. այն է՝

...ախտիք մտիս յոյժ շարացնալ:
Բարձ գայն յինն կոյս երանեալ:
գունդքն դիաց յիցին հերբեալ:
Դրոնք մտաց իմ քն սրբեալ:
եղիցի քեզ ուս: պատրաստեալ:
Ձի շնորհի: քով արծան տեսեալ:
էկեսցես անդ յարամեալ:
Թախանձանօք մաղթեմ ի քէն:
ժանկրն մեղաց հանցես յինն (ԼՁ 205):

Այս եղանակով, կոնկրետ ղեկավարում, ստացվում է, որ բացակայում է մեկ տառով տողի կիրառություն, որով ամրակայվում է այբուբենի յուրաքանչյուր տառի դիրքն ու շրջապատը՝ ընդհանուր շղթայի մեջ: Երրորդ՝ սկսած այբուբենի կիրառման Ի (34-րդ) ղեկից ներառյալ Փ (35-րդ) ղեկը ոչ միայն պահպանվում են նախորդ սկզբունքները, այլև ավելանում է նորը. տողերի միջին մասերում, յուրաքանչյուր տողում մեկ բառի ներմուծումով ստացվում են ուղղահայաց ընթերցմամբ նախադասությունների ակրոստիքոսային ներմուծումներ: Բերենք միայն մեկ նախադասության օրինակ.

Ինտեաց (Հրեշտակ) րն վերնական.
փառաց մօր (տեառն) իմոյ ըզրան:
Քաղցր (աւետեաց) լուր ցնծութեան.
ամրիժ (կուսին) ետ սուրբ պետն այն:
Բաղդատ (մարիամու) ո՛ղ մին.
զոյով կոյս (և յղացաւ): զորդին:
Դուտրն (ի յոգւոյն) զգայականին.
Խտ զգայութիւն (սրբոյ) բանին... (էջ 235):

Այստեղ, փակագծերում նշվող բառերը ուղղահայաց ընթերցմամբ արտահայտում են որոշակի գաղափար, քանի որ ներմուծված է իբրև մեկ նախադասություն՝ «Հրեշտակ տեառն աւետեաց կուսին մարիամու և յղացաւ ի յոգւոյն սրբոյ»: Ըստ այդմ, հիշյալ երկու տառերի ղեկավարում հանդես են գալիս նաև հետևյալ նախադասությունները.

«Ողջոյն քեզ Մարիամ լի շնորհօք», «Ահաւասիկ կամ աղախին տեառն, ևղիցի ինձ ըստ բանի քում», «Ողջոյն քեզ Մարիամ լի շնորհօք», «Եւ բան Մարիամ ևղև և բնակեցաւ ի մեզ», «Ողջոյն քեզ Մարիամ լի շնորհօք», «Տէր քնդ քեզ, օրհնեալ ես զու ի կանայս, օրհնեալ է պտուղն որովայնիդ քոյ Յիսուս», «Սրբուհի Մարիամ, մայր աստուծոյ աղօթեալ վասն մեր մեղաւորացս՝ այժմ և ի ժամ մահու մերոյ, ամէն». «Յիսուս, Մարիամ, սիրտ և զճգիս իմ

ձեզ տամ»։ Ինչպես դժվար չէ նկատել, այդ նախադասությունները սյուժետիկ հաջորդականություն ունեն, դրանցից մի մասը մեջբերված է Կտակարանից, մի մասն էլ՝ վերաշարադրված վերջինիս համապատասխան նյութի հիման վրա, ուղղակի մեջբերում է, օրինակ, «Ահաասիկ կամ աղախին տեառն, եղիցի ինձ ըստ բանի քուժ» նախադասությունը։ Ուստի և՛ Սեբաստացին ակրոստիքոսի նոր հնարանքով տալիս է բոհստոնեական բովանդակությամբ հատվածի՝ իր ժամանակի համար հարկավոր ուսուցման հնարավորություն։

Մ. Սեբաստացու «Կրթութիւն աղօթից» դիրքը բնդհանուր առմամբ շարադրված է ժամանակի գրաբար հայերենով, որտեղ նկատելի է հեղինակի միտումը գոյություն ունեցող լատինատիպ ձևերի կիրառության թուլացման գործում։ Ինչպես այդ, այնպես էլ նույն շրջանում գրված մյուս գործերում նա հետզհետե կարողանում է գրաբար հայերենը բռնաթափել լատիներենի օրինակով կազմված բառապաշարային և բերականական անհարկի ձևերից։ Այս երկու գործերը Մ. Սեբաստացու այն աշխատություններից են, որոնք իրենց լեզվական վիճակով ներկայացնում են մի տեսակ անցման փուլ՝ լատինատիպ հայերենից դեպի հին հայերենի դասական նորման ձգտող գրաբարը, որն իրականանում էր բավական դժվարին եղանակով, մեծ խոչընդոտներով։ Այս դեպքում դեռևս բավական շատ են լատինատիպ ձևերը, որոնք ունեն համեմատաբար հաճախակի կիրառություն։ Դրանք հանդիպում են հատկապես՝ ա) գոյականների և այլ խոսքի մասերի հոլովման (հմմտ. ի կնտոզ, ըմմիում, ըմվեջնոյ, նայսմիկ, ի աղօրոջ, ներ չրի, ենք զաւազանի, նոբում, նիւմեան, ներ տրամուրեան, ենք նշանի, զանցեալ կեանն բո և այլն), բ) քայերի խոնարհման (հմմտ. եղանիցիւր, ընքնոնանիցին, քողանի, տրիլ, նեղանին, զտանեէին և այլն), գ) ածականների համեմատության աստիճանների կազմության (հմմտ. ազնուագունեղ, նուստագունեղ, հաստատագունեղ, գրածագունեղ, փաղցրագունեղ, գերագնցագունեղութեան գրութեան բոյ, վերջնագունեղի աստիճանի երջանկութեան արժանատոս, առգրածագունեղ, առնել զհաստատագունեղ յառաջադրութիւն և այլն) տիպի կազմություններում։ Այս կարգի ձևերն ափանդված են շատ վաղուց և, բացառությամբ ածականների համեմատության գերադրական աստիճանի կազմության ձևերի, ունեն համեմատաբար սակավ կիրառություն։ Այդ կարգի խորթություններ հանդիպում են գերազանցապես «Կրթութիւն աղօթից»-ի մեջ։

Մ. Սեբաստացու «երգաբանութիւն» չափածո ստեղծագործությունը շարադրված է եղել ափելի շուտ, քան «Կրթութիւն աղօթից»-ը։ Հեղինակը զբաղվելով այդ մասին գրում է, «...և զի մինչ այս երգաբանութիւն ի վաղնջուց ժամանակաց ի տիս մանկութեան շարադրեցեալ էր ի նոյնոյ մխիթարայ վարդապետէ, որ ի ներկայիս զայս կրթութիւն աղօթից շարագրեաց, յոյժ պատկան համարեցեալ եղև, զի այժմ ընդ սմին ի մի տուփ եղեալ տպագրիցի...»¹⁴։ Ապա տալիս է հետևյալ ծածկագրությունը, որն ամփոփում է «երգաբանութիւն» երկի գրության ժամանակը. «Եւ թուականն հայոց յորում ժամանակի շարագրեցեալ եղև երգաբանութիւն կուսին, ցուցանի ի հետևյալ տողս։

Հայն թիւ ինքեամբ բազմապատկեալ
որ ի մասանց իւր բաղկանայ,
գեղեայն անդուստ բաղորոշեալ.

խորով ինքեամբ յոգնապատկեա.
 Զեռեակ յիսնեակս ի բաց ձեւս.
 որ ինչ մնայ զայնս հաշուեա.
 Յայնմիկ թուոջ որ արամեայ.
 զերզն կուսին եղևսլ զիտեա» (ԼՂ 266):

Բերված ծածկագրությունը վերծանում ենք հետևյալ կերպ: Լեյս հանգա-
 վոր տողերում ուշագրավ է սկզբում գրված զայն բառը. վերջինս ձևի տեսա-
 կետից կարող է գիտվել, նախ՝ իբրև այն ցուցական երրորդ դեմքի դերանուն,
 որ հանդես է եկել իբրև որոշիչ և իր վրա կրում է հայցական հոլովով առնված
 որոշյալ քիւ բառի զ նախգիրը. երկրորդ՝ որպես հայերենի այբուբենի զա-
 անունն ունեցող թվական՝ այստեղ կիրառված է գոյականաբար և նախադա-
 սություն ենթակայի պաշտոնով, որոշյալ առումով, որի դեպքում ա ձայնա-
 վորի է և որոշիչ հոդի միջև, հայտնի օրենքով, կարող էր գրվել յ կիսաձայնը,
 երրորդ՝ ձևական այս նմանությունը դարձել է ծածկագրության մի հնարա-
 միս միջոց, որին խալսխված է ողջ գործողությունների հերթականությունը:
 Լեյսպես, երբ զ (6) թիվը բազմապատկում ենք իրենով (6×6), ստացված
 թիվը (36) դարձյալ իրենով (36×36), այնուհետև՝ արդյունքից (1296) հա-
 նում ենք 150, ապա ստացվում է 1146. վերջինիս ավելացնելով 551՝ ստա-
 նում ենք 1697, որն էլ «Երգաբանության» բանաստեղծության գրելու ժամա-
 նակն է: Ուստի և՛ Մ. Սեբաստացին այդ շափածո ստեղծագործությունը գրել է
 21 տարեկան հասակում, երբ գտնվում էր Կ. Պոլսում (1697 թ. ապրիլ-օգոս-
 տոս ամիսներ):

Մ. Սեբաստացու «Երգաբանություն» բանաստեղծությունը մինչև այժմ չի
 արժանացել բանասերների ուշադրությանը՝ հատկապես վերը առաջ քաշ-
 ված խնդիրների կամ դրանցից որևէ մեկի առումով: Ինչպես Մ. Սեբաստացու
 կյանքին և գրական-մշակութային գործի մեկնաբանմանը նվիրված աշխա-
 տությունները, այնպես էլ Մխիթարյան միաբանության և նրա գործունեու-
 թյան որևէ տարեկիցի առթիվ գրված մեծ և փոքր ուսումնասիրությունները
 չեն անդրադառնում Մ. Սեբաստացու հիշյալ գործի վերլուծմանը¹⁵:

Լեյսպիսով, պարզվում է, որ Մխիթար Սեբաստացու «Երգաբանություն»
 շափածո ստեղծագործությունը շարադրված է որոշակի բանաստեղծական կա-
 ուցվածքով, հետապնդում է կոնկրետ նպատակ և պարունակում է ժամանակի
 գրաբար հայերենի մեջ՝ լատինատիպ ձևերի նվազող դրսևորումներ, որոնց
 անդրադառնալն ավելի է ամբողջացնում մեծ հայկաբանի գրական գործու-
 նեություն ամբողջական պատկերը:

¹⁵ Հիշենք. օրինակ, «Բազմապեպի» հատկապես այն համարները (1876, № 21, 1977, № 1—4), որոնցում ժամանակին զետեղվել են Մ. Սեբաստացուն և Մխիթարյան միաբանու-
 թյան հորելյաններին նվիրված նյութեր, նաև՝ Ս. Ս. Լեյսը, Պատմություն կենաց և վա-
 րուց տեստես Մխիթարա Սեբաստացվո, Վենետիկ, 1810, «Համառոտ նկարագրություն Մխիթար-
 յան միաբանության, Վենետիկ, 1819, Հ. Թորոսյան, Վարք Մխիթարա արքայի Սե-
 բաստացվո, Վենետիկ, 1901, Հ. Ալան, Մխիթարյանք գրականության հանդեպ (1701—
 1901), Վենետիկ, 1902, Բ. Սարգիսյան, Երկհարյուրամյա գրական գործունեություն և
 նշանավոր գործիչներ Վենետիկ Մխիթարյան միաբանության, Վենետիկ, 1905:

О ДВУХ КНИГАХ, НАПЕЧАТАННЫХ В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ XVIII ВЕКА

ВАЗГЕН АМБАРЦУМЯН

Резюме

Вопреки известным до сих пор библиографическим сведениям, книга Георга Мхланма «Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկարեակաց» (Константинополь, 1734) содержит два отдельных сочинения автора. Первое из них является самостоятельным трудом, а второе представляет собой перевод с латинского языка — под заглавием «Պահք անշին քրիստոնէից. ցուցեալ ի թղթոյն Օգոստինոսի: Թարգմանութեամբ շարադրողի վերոյ գրեցեալ գրքոյն»:

В книге Мхитара Себастиан «Կրթութիւն աղօթից» (Венеция, 1718) имеется интересное по своей структуре стихотворение «Երգաբանութիւն ան ամէնօրհնեցեալ կոյսն Մարիամ», представляющее собой самобытный акростих. Расшифровка тайнописи, приведенной автором в конце стихотворения, дает возможность датировать его 1697 г.